ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը Աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ հայրենակիցներ,

մենք ավանդաբար Մայիսի 1-ը նշում ենք որպես աշխատավոր, հայրենիք ու ընտանիք կերտող մարդու տոն, որը եւ հոգեհարազատ է ամենքիս:

Այս տոնի խորհրդի մեջ մենք տեսնում ենք մեր աշխարհը շեն ու նորոգ պահող հողի մշակներին, շինարարներին, արհեստավորներին, մանկավարժներին, բժիշկներին, արտադրողներին, գործարարներին, մտավորականներին, հայրենի երկրի խաղաղությունն ապահովող զինվորականներին, արվեստի ու մշակույթի գործիչներին, կառավարման ոլորտի ներկայացուցիչներին, այլ մասնագիտությունների տեր անձանց, որոնց անդուլ, ջանադիր աշխատանքի արդյունքում է ծաղկում ու զարգանում, նորանում մեր համայնքը:

Առանձնակի ուզում եմ շնորհավորանքներս հղել աշխատանքի վետերաններին, ովքեր մեծ ներդրում են ունեցել Մարտունի համայնքի շենացման ու զարգացման մեջ, ովքեր իրենց աշխատասիրությունն ու փորձը սիրով փոխանցել են մեզ:

Աշխատանքը մեր գերագույն արժեքն է, աշխատավոր մարդը՝ մեր հայրենիքի ուժն ու ոգին, պայծառ ապագայի դարբինը:

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ, մաղթում խաղաղ հայրենիք, քաջառողջություն, աշխատանքային անսպառ եռանդ ու ձեռքբերումներ, բարօր ու երջանիկ կյանք, տոնական բարձր տրամադրություն:

Լավագույն ցանկություններով `

Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյան